

Ձեռագրերն մէջ, որ գրուած է Յովհաննավանք, գրիչ «Սարկաւազ մոնոզոն» եւ յետոյ ձեռագիրը այլուր եկեղեցիի մը նուիրած է, Տէր Ներսէսի մասին կը յիշատակադրուի։ «Աստանաւր երեւեալ ի շնորհաց Աստուծոյ ճղնաւոր սմն միայնակեաց աստուածահաճոյ վարուք, պանծացեալ կուսակրան կարգաւորութեամբ, ընդդէմ հանապազաւրեան թշնամւոյն հանդիսացեալ ի մանկութենէ, ժիւր եւ հոգատակ յամենայն աստուածային արէշնան։ Եւ տարաշխարհիկ լինելով յամենայն ամի ի հեռաւոր քաղաքս յաղազս վաճառաշահութեան, եւ զմարմնաւորն առեալ՝ հողեւորին փոխանակէր, Ներսէս անուն, որ եւ մանկունս գնոց ստացեալ՝ վարժէր աստուածահաճոյ վարուք, եւ ի չափ հասուցեալ՝ տայր յուսումն բանի սպասաւորութեան, եւ այլոց բողմաց կարեկիր եւ արդիւնարար լինէր, յաշխարհականս եւ ի վանականս։ Եւ զամենայն ժամանակս իւր՝ այսպէս անցուցանէր» («Այլալատ», էջ 172)։ Վկայութեանս համաձայն, Ներսէս կրօնաւորութեան մէջ մտնելէ առաջ ըզրադած էր վաճառականութեամբ եւ հեռաւոր քաղաքներ եղած ժամանակ կը ղինէր զերութենէ մանուկներ եւ զանոնք կրթութեան տալով կրօնաւոր կ'ընէր։

Անտարակոյս ինքն է որ կը յիշուի այժմ ոչնչացած արձանագրութեան մէջ Յովհաննավանքի կաթողիկէ եկեղեցւոյն ներսը հարաւային պատին իբր «Եւ առաջնորդ ս(ուր)ր ուխտիս տ(է)ր Ներսէս»։ Արձանագրութեան թուականը Ղաֆաղարեան ՁԴԹ (1350) կը կարգայ, թէեւ լուսանկարի վրայէ։

Այսքանով ալ կ'աւարտի իր եւ իր ընտանեաց մասին մեր զխոցածը։

Դսեղի Մամիկոնեաններու ԺԴ դարու ճիւղագրութեան համար անտարակոյս կարեւոր է յիշատակարաններու հրատարակութիւնը, մանաւանդ արձանագրութեանց։ Շատ հաւանարար Թիմուրլէնկի ժամանակ եւ անկէ վերջ երկրին անտանելի վիճակը ստիպեցին Դսեղի Մամիկոնեանները հեռանալ իրենց հայրենիքէն եւ գուցէ գաղթեցին Ղրիմ, ինչպէս որ վերը այլուր ակնարկեցինք։

Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն Ն Ե Ր

Թ Ի Ի 1

«Ժամատան հիւսիսային մուտքի գլխին։ Այժմ մեծ ժամատան մէջ»։

«Ի թագաւորութեանս վրաց Գաւրկէ, յամիրսպասաւարութեան Ձաքարէի եւ Իւանէի եղբաւր իւրոյ, ի ՈՅ (1191) թվո, ես՝ Քուրդս, Հասան, Համադաս(փ)պ, Սարգիս, որդիք Սմբատա, որդո Համ(ա)զ(ա)սպա մարծպանի, տօյաք զՄանթլա կէսն ի մեր հայրենեացս, ի մեր հողս Տալքս՝ ի Սան(ա)հինս՝ մեր մեռելոցն հողոյն եւ մեր արեւչատութեան։ Ընկալաք հայրս Յովանէս եւ միարանք եւ գրեցաք զհամարաժուծն աւրս զամէն եկեղեցիք նացա ժամն, մինչ ուխտս ի հաստատութե(ա)ն եւ գաւուրս հացն ի նացա անուն սեղանիս։ Մի ոք խափանեցէ»։

(«Սանահնի վանքը եւ Նրա Արձանագրութիւնները»։ Կարօ Ղաֆաղարեան, Երեւան 1957, էջ 106)։ Արձանագրութիւնս ունեցած է չորս հրատարակութիւն։ Հոս նախընտրած ենք Ղաֆաղարեանի ընթերցումը եւ հրատարակութիւնը։